ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ««ԼԱՎԱԳՈՒՅՆ ՄԱՐԶԱԿԱՆ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ» ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՍՊ-ԳՀԾՁԲ-19/8-132

ք. Երևան «22» 03 2019 թ.

Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Վահե Էլոյանի, որը գործում է Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԼՈՌԵ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Գոհար Աղաջանյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ««**Լավագույն մարզական նախադպրոցական հաստատություն» միջոցառման անցկացման**» ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված __5__ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 9 990 000 (ինը միլիոն ինը հարյուր իննսուն հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն[1]:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

---

[1] *Եթե Կատարողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[2]:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[3]

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ,

---

[2] *Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:*

[3] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է **_13_** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն
ք. Երևան, Աբովյան 9
Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ 900011004489
ՀՎՀՀ 02586282
Գլխավոր քարտուղար՝
-------------------------Վ. Էլոյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«ԼՈՌԵ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ
գործունեության հասցե՝
ՀՀ, ք. Երևան Չարենցի 4
«ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ
Հ/Հ16033015694600
ՀՎՀՀ 06952546
Տնօրեն՝
-------------------------Գ. Առաքելյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 1
«22» 03 2019 թ. կնքված
«ՍՊ-ԳՀԾՁԲ-19/8»132 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը**
1	92621110/3	*հավելված տեխնիկական բնութագիր	դրամ	9 990 000	1		**Մրցույթը կազմակերպվելու և անցկացվելու է 2019 թվականի ապրիլի 20-ից հունիսի -21-ը**
						2-րդ փուլ՝ Հայաստանի Հանրապետության 40 համայնքներում, Երևան քաղաքի 12 վարչական շրջանների և Արցախի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքում 2019 թվականի ապրիլի 20-ից մայիսի 10-ը.	20.04-10.05.19թ
						3-րդ փուլ՝ Հայաստանի Հանրապետության մարզերում, Երևան քաղաքում և Արցախի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքում 2019 թ. մայիսի 25-ից հունիսի 5-ը.	25.05-05.06.19թ
						4-րդ եզրափակիչ փուլ ք. Երևան	20-21.06.19թ

***հավելված տեխնիկական բնութագիր**

1.«Լավագույն մարզական նախադպրոցական հաստատություն» 2019 թվականի մրցույթի (այսուհետ՝ Մրցույթ) նպատակն և խնդիրներն են՝

1) անհատի բազմակողմանի ու ներդաշնակ զարգացում, նախադպրոցական տարիքի երեխաների առողջության ամրապնդում, շարժողական ընդունակությունների ձևավորում, առողջության ամրապնդում, առողջ ապրելակերպի գաղափարի ձևավորում, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի դերի բարձրացում.

2) նախադպրոցական տարիքի երեխաների շրջանում տարբեր մարզաձևերով մարզվելու կողմնորոշման ձևավորում, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի քարոզչություն, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի դերի կարևորում:

2. Մրցույթն անցկացվելու է 4 փուլով.

1) 1-ին փուլ՝ նախադպրոցական հաստատություններում և նախակրթարաններում.

2) 2-րդ փուլ՝ Հայաստանի Հանրապետության 40 համայնքներում, Երևան քաղաքի 12 վարչական շրջանների և Արցախի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքում 2019 թվականի ապրիլի 20-ից մայիսի 10-ը.

ա) Արագածոտնի մարզ – ք. Աշտարակ, ք. Ապարան, ք. Թալին,
բ) Արարատի մարզ - ք. Արտաշատ, ք. Արարատ, ք. Մասիս, ք. Վեդի,
գ) Արմավիրի մարզ - ք. Արմավիր, ք. Էջմիածին, գ. Լեռնագոգ,
դ) Գեղարքունիքի մարզ - ք. Գավառ, ք. Ճամբարակ, ք. Մարտունի, ք. Վարդենիս, ք. Սևան,
ե) Լոռու մարզ – ք. Վանաձոր, ք. Ալավերդի, ք. Ստեփանավան, ք. Սպիտակ, ք. Տաշիր,
զ) Կոտայքի մարզ - ք. Հրազդան, ք. Աբովյան, ք. Չարենցավան, ք. Եղվարդ,
է) Շիրակի մարզ – ք. Գյումրի, ք. Արթիկ, ք. Մարալիկ, գ. Ամասիա-գ. Աշոցք,
գ. Ախուրյան,
ը) Սյունիքի մարզ - ք. Կապան, ք. Գորիս, ք. Սիսիան, ք. Քաջարան, ք. Մեղրի
թ) Վայոց ձորի մարզ - ք. Եղեգնաձոր, ք. Վայք,
ժ) Տավուշի մարզ - ք. Իջևան, ք. Դիլիջան, ք. Նոյեմբերյան, ք. Բերդ
ժա) Արցախի Հանրապետություն - ք. Ստեփանակերտ,
ժբ) Երևան քաղաքի 9 վարչական շրջաններում՝ Աջափնյակ–Դավթաշեն, Արաբկիր, Էրեբունի - Նուբարաշեն, Կենտրոն, Մալաթիա-Սեբաստիա, Նոր Նորք, Ավան-
Նորք-Մարաշ, Շենգավիթ, Քանաքեռ-Զեյթուն:

3) 3-րդ փուլ՝ Հայաստանի Հանրապետության մարզերում, Երևան քաղաքում և Արցախի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքում 2019 թ. մայիսի 25-ից հունիսի 5-ը.

4) 4-րդ՝ եզրափակիչ փուլ (հանրապետական), 2019 թվականի հունիսի 20-ից 21-ը ք. Երևան:

5) Համայնքային և մարզային փուլերի անցկացման ժամանակացույցը ներկայացվում է Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն (այսուհետ՝ Նախարարություն) մինչև 2019 թվականի ապրիլի 15-ը:

5. Մրցույթի անցկացման աշխատանքները համակարգում է Նախարարությունը:

6. 2-րդ փուլի կազմակերպման և անցկացման աշխատանքները համայնքներում իրականացնում են համայնքապետարանները,վարչական շրջանները և քաղաքապետարանները, իսկ 3-րդ փուլի մրցումների կազմակերպման և անցկացման աշխատանքները իրականացնում են Հայաստանի Հանրապետության մարզպետարանները, Երևանի քաղաքապետարանը, Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարությունը: 4-րդ՝ եզրափակիչ փուլի մրցումների անցկացման անմիջական պատասխանատվությունը կրում է Նախարարության կողմից հաստատված մրցավարական հանձնաժողովը:

7. Մրցույթին կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետության մարզերի Հաստատությունների ավագ տարիքի բոլոր երեխաները *(թիմի կազմը՝ 5 տղա, 5 աղջիկ և 2 ներկայացուցիչ)*:

8. Մրցույթի կազմակերպման և անցկացման կարգը տեղերում որոշում են կազմակերպիչները՝ համաձայնեցնելով Նախարարության հետ:

9. Մրցույթի 3-րդ փուլի մրցումներին 1-ին տեղերը գրաված Հաստատությունները կմասնակցեն Երևան քաղաքում անցկացվող եզրափակիչ փուլի մրցումներին:

10. Մրցույթի 2-րդ փուլի 1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը գրված Հաստատությունները պարգևատրվում են Նախարարության համապատասխան կարգի հավաստագրերով, մարզագույքով:

11.Մրցույթի 3-րդ փուլի 1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը գրված Հաստատությունները պարգևատրվում են Նախարարության համապատասխան կարգի հավաստագրերով:

12. Մրցույթի 4-րդ փուլերում 1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը գրված Հաստատությունները պարգևատրվում են Նախարարության համապատասխան կարգի հավաստագրերով, մեդալներով և գավաթներով, իսկ 4-12-րդ տեղեր գրված թիմերը մարզագույքով և շնորհակալագրերով:

13. Մրցույթի ծախսերն իրականացվում են տարեկան պետական բյուջեով նախատեսված «Լավագույն մարզական նախադպրոցական հաստատություն» մրցույթի անցկացում ծրագրի շրջանակում:

«Լավագույն մարզական նախադպրոցական հաստատություն» մրցույթի անցկացման համար 2-րդ, 3-րդ և 4-րդ փուլերում 1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը գրված հաստատություններին պարգևատրելու համար անհրաժեշտ են հետևյալ մրցանակները և պարագաները՝

- Վկայագիր՝ (հավաստագիր, շնորհակալագիր). չափսը՝ 30 x 20 սմ, թղթե, օֆսեթ, կավճապատ, խտությունը՝ 220 գ/քմ: Տեքստը համաձայնեցնել ՄՍՖԴՔ վարչության հետ՝

186 հատ

2-րդ փուլ՝ <u>1-ին տեղը</u>

- Մանկական հեծանիվ՝ կարկասը մետաղական, քաշը 9-10 կգ,անիվների տրամագիծը՝ 12 դույմ, ղեկի բարձրությունը կարգավորվող և վրա զանգ ամրացված, բռնակները ռետինեպատ, արգելակումն ոտքով, կամ ոտքով և ձեռքով, նստատեղը ռետինապատ և կարգավորվող, հետևի անվադողին կից հավասարակշռող 2 փոքր անիվներ, դիմացի և ետևի անվադողերին ամրացված մետաղյա կամ պլաստմասյա թևակներ, յուրաքանչյուր հաստատությանը 1 հատ: **(50 հատ)**
- Գնդակ մանկական՝ կաշվե կամ փոխարինող հումքից, չափս №3-4, յուրաքանչյուր հաստատությանը 5 հատ:

(5x50=250 հատ)

- Մարմնամարզական փուչիկ, բռնակով, 50-60 սմ տրամագծով, յուրաքանչյուր հաստատությանը 4 հատ:
(4x 50=200 հատ)

Մարմնամարզական օղակ՝ պլաստմասե, Հաստություն՝ 20մմ, տրամագիծ՝ 70-80 սմ, յուրաքանչյուր հաստատությանը 6 հատ **(6x 50=300 հատ)**

<u>2-րդ տեղը</u>

- Մանկական հեծանիվ՝ կարկասը մետաղական, քաշը 9-10 կգ,անիվների տրամագիծը՝ 12 դույմ, ղեկի բարձրությունը կարգավորվող և վրա զանգ ամրացված, բռնակները ռետինեպատ, արգելակումն ոտքով, կամ ոտքով և ձեռքով, նստատեղը ռետինապատ և կարգավորվող, հետևի անվադողին կից հավասարակշռող 2 փոքր անիվներ,դիմացի և ետևի անվադողերին ամրացված մետաղյա կամ պլաստմասյա թևակներ, յուրաքանչյուր հաստատությանը 1 հատ:
(50 հատ)

- Գնդակ մանկական՝ կաշվե կամ փոխարինող հումքից, չափս №3-4, յուրաքանչյուր հաստատությանը 4 հատ:

(4x50=200 հատ)

- Մարմնամարզական փուչիկ, բռնակով, 50-60 սմ տրամագծով, յուրաքանչյուր հաստատությանը 3 հատ:
(3x 50=150 հատ)

Մարմնամարզական օղակ՝ պլաստմասե, Հաստություն՝ 20մմ, տրամագիծ՝ 70-80 սմ, յուրաքանչյուր հաստատությանը 4 հատ **(4x 50=200 հատ)**

3-րդ տեղը

- Մանկական հեծանիվ՝ կարկասը մետաղական, քաշը 9-10 կգ,անիվների տրամագիծը՝ 12 դույմ, ղեկի բարձրությունը կարգավորվող և վրա զանգ ամրացված, բռնակները ռետինեպատ, արգելակումն ոտքով, կամ ոտքով և ձեռքով, նստատեղը ռետինապատ և կարգավորվող, հետևի անվադողին կից հավասարակշռող 2 փոքր անիվներ,դիմացի և ետևի անվադողերին ամրացված մետաղյա կամ պլասմասյա թևակներ, յուրաքանչյուր հաստատությանը 1 հատ:

(50 հատ)

- Գնդակ մանկական՝ կաշվե կամ փոխարինող հումքից, չափս №3-4, յուրաքանչյուր հաստատությանը 3 հատ:

(3x50=150 հատ)

- Մարմնամարզական փուչիկ, բռնակով, 50-60 սմ տրամագծով, յուրաքանչյուր հաստատությանը 2 հատ:

(2x50=100 հատ)

Մարմնամարզական օղակ՝ պլասմասե, Հաստություն՝ 20մմ, տրամագիծ՝ 70-80 սմ, յուրաքանչյուր հաստատությանը 2 հատ **(2x 50=300 հատ)**

3-րդ փուլ՝ 1-ին տեղը

- Գավաթ (1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը գրված պատվիրակությունների համար) 55 սմ, 50 սմ և 45 սմ բարձրությամբ, միանման, ոսկեգույն, էբոնիտե պատվանդանով՝ վրան գրված միջոցառման անվանումը և տեղը, տեքստը համաձայնեցնել նախարարության աշխատակազմի ՄՍՖԴՔ վարչության հետ:

(3x12=36 հատ)

4-րդ՝ եզրափակիչ փուլում մատուցվող ծառայություններ

- Վկայագիր.(հավաստագիր,շնորհակալագիր). չափսը՝ 30 x 20 սմ, թղթե, օֆսեթ, կավճապատ, խտությունը՝ 220 գ/քմ: Տեքստը համաձայնեցնել ՄՍՖԴՔ վարչության հետ

(12 հատ)

- Վկայագիրի գրպանիկով թղթապանակ, գինանշանով (Շնորհակալագիրի և հավաստագրի): Չափսը՝ 32 x 22 սմ, թղթե, օֆսեթ, կավճապատ, խտությունը՝ 220գ/քմ: Տեքստը համաձայնեցնել ՄՍՖԴՔ վարչության հետ:

(12 հատ)

- Մեդալներ. չափսը՝ 5 սմ տրամագծով x 3 մմ հաստությամբ, մետաղե ձուլվածք, եռագույն ժապավենով՝ 0.80 սմ երկարությամբ, սինթետիկ հումքից (1-ին,2-րդ և 3-րդ տեղեր գրված մասնակիցներին):
  Տեսքը համաձայնեցնել նախարարության աշխատակազմի ՄՍՖԴՔ վարչության հետ:

(30 հատ)

- Գավաթ (1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը գրված պատվիրակության համար)՝ 65 սմ, 60 սմ և 55 սմ բարձրությամբ, ոսկեգույն, միանման, էբոնիտե պատվանդանով վրան գրված միջոցառման անվանումը և տեղը, տեքստը համաձայնեցնել նախարարության աշխատակազմի ՄՍՖԴՔ վարչության հետ:

(3 հատ)

- Մարզադահլիճի վարձակալում՝
Երևանի մարզադահլիճներից մեկում, մարզադահլիճի ձևավորում դրոշակներով և պաստառներով զարդարված:

(1 օր)

- Ռադիոհանգույցի վարձակալում՝
  բարձրախոս 7 կվ հզորությամբ, 2 բարձրախոս առանց լարի, 1-ը լարով, միկշերային վահանակ: **(1 օր)**

- Հաղորդավարի ծառայություն

(1 օր)

- Մրցավարների համար բամբակյա կտորից ամառային շապիկ և գլխարկ, գույնը՝ սպիտակ, «Լավագույն

մարզական ընտանիք» մրցույթի պատկերանշանով (հանձնվում է անհատույց, սեփականության իրավունքով):
Մարզաշապիկի չափսերը՝ XXL - 3 հատ, XL - 3 հատ, L - 4 հատ, M - 4 հատ:
Ընդամենը՝ **14 հատ**

- Արևային գլխարկ (կեպի) **14 հատ**

- Նվերներ. մարզահագուստ մասնակից բոլոր երեխաների համար՝ կիսասինթետիկ հումքից, վերնազգեստը կարմիր կամ կապույտ՝ եզրագծված սև և սպիտակ գծերով, տաբատը սև (հանձնվում է անհատույց, սեփականության իրավունքով), չափսերն 6-7 տարեկան երեխաների համապատասխան;
(120 հատ)

- **Մարզագույք.** Մանկական հեծանիվ՝ կարկասը մետաղական, քաշը 9-10 կգ,անիվների տրամագիծը՝ 12-14 դույմ, ղեկի բարձրությունը կարգավորվող և վրա զանգ ամրացված, բռնակները ռետինեպատ, արգելակումն ոտքով, կամ ոտքով և ձեռքով, նստատեղը ռետինապատ և կարգավորվող, հետևի անվադողին կից հավասարակշռող 2 փոքր անիվներ,դիմացի և ետևի անվադողերին ամրացված մետաղյա կամ պլասմասյա թևակներ. հանձնվում է անհատույց, սեփականության իրավուքով՝ եզրափակիչ փուլում **4-12-րդ տեղերը** գրված նախադպրոցական հիմնարկներին (մեկական): **(9 հատ)**

- Գնդակ մանկական՝ կաշվե կամ փոխարինող հումքից, չափս №3-4, յուրաքանչյուր հաստատությանը 4 հատ:
(4x9=36 հատ)

- Մարմնամարզական փուչիկ, բռնակով, 50-60 սմ տրամագծով, յուրաքանչյուր հաստատությանը 1 հատ:
(1x9=9 հատ)

- Միջոցառման ավարտին ճայթռուկ (հրավառություն՝ **6** կետից), մարզադահլիճում:

- Հաղորդավարի ծառայություն,
1 օր
- Ֆոտո նկարահանում **1 օր**

- Մարզադահլիճի տրամադրում Երևան քաղաքի որևե մարզադահլիճներից մեկում: Մարզադահլիճի ձևավորման, մարզադահլիճի և հարակից տարածքի ձևավորում դրոշակներով և պաստառներով), միջոցառման ավարտից հետո ապամոնտաժում և պահեստավորում, պարգևատրման արարողությունը կազմակերպելու համար պատվանդանի առկայություն: Մարզադահլիճի կահավորման տեսքը համաձայնեցնել նախարարության աշխատակազմի ՄՍՖԴՔ վարչության հետ՝ :
1 օր

<u>Այլ ծախսեր գրենական պիտույքներ՝</u>

- Բաններ միջոցարման անվանումով (խորդանիշով) պատրաստված պոլիէսթերային նյութից, բանների չափսը՝ 2 մ x 2 մ, 4 եզրերը մետաղյա օղերով 15-20 սմ հեռավորությամբ, բաների տեկստը համաձայնեցնել ՄՍՖԴՔ վարչության հետ:
1 հատ

- Թղթե արագակար կավճած ստվարաթղթից, մետաղական ամրակով, A4 (210 x 297 մմ) ձևաչափի թերթերի համար:
-
10 հատ
- Ֆայլ (թափանցիկ պոլիմերային թաղանթ, A4 ձևաչափի թղթերի համար, արագակալներին ամրացնելու հնարավորությամբ:
50հատ
- Գունավոր ժապավեն սինթետիկ հումքից, գլանափաթաթված ժապավեն 48 մմ լայնությամբ (տարբեր գույների):

100 մետր

- Կպչուն ժապավեն (սկոչ):

3 հատ

- Թուղթ A4 չափսի 1 (21 x 29.7), չկավճած թուղթ, օգտագործվում է տպագրման համար, թելիկներ չպարունակող, մեխանիկական եղանակով ստացված, 80 գ/մ^2 (210 x 297) մմ:

2 հատ

- Թղթապանակ (ռեգիստրատոր)՝ 2 օղակով, պլաստիկ, լայնությունը՝ 80 մմ, A4 չափսի:

10 հատ

- Գրիչ գնդիկավոր. տարբեր գույների, տարբեր տեսակի կառուցվածքներով, մեծ և փոքր չափերի:

10 հատ

- Տրանսպորտային միջոց եզրափակիչ փուլի մարզագույքը տեղափոխելու համար՝ մեկ բեռնատար մեքենա:

(1 բեռնատար մեքենա)

** ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:*

**** Վերոհիշյալ մրցույթն անցկացվում է Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի 14-ը հունվարի 2019 թ. N 4-Ա/1 հրամանով հաստատված «Լավագույն մարզական նախադպրոցական հաստատություն» մրցույթի անցկացման 2019 թվականի կանոնակարգի պահանջների համաձայն:***

***** Պարտադիր պայման է գույքի չօգտագործված լինելը:***

******Միջոցառման անցկացման համար նախատեսված մրցանակներն և անհրաժեշտ գույքը Կատարողը հասցնում մրցավայրեր՝ 2-րդ փուլում ՀՀ 40 համայնքներ, ԱՀ ք. Ստեփանակերտ և Երևան քաղաքի 9 վարչական շրջաններ, 3-րդ փուլում ՀՀ 10 մարզկենտրոններ, ԱՀ ք. Ստեփանակերտ և Երևան, եզրափակիչ փուլը՝ ք. Երևան: Մասսայական սպորտի և ֆիզիկական դաստիարակության քաղաքականության վարչության կողմից կատարողին լրացուցիչ տրամադրվող ժամանակացույցի և պարգևատրման ցանկի համապատասխան տեղերում կազմակերպում է պարգևատրումը, կազմում է մրցանակների և գույքի բաշխման ցուցակները, որոնք հետագայում դառնում են ընդունման-հանձնման ակտի անբաժանելի մասը: Կատարողը իրականացնում է բոլոր կազմակերպչական աշխատանքները՝ համաձայնեցնելով ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության մասսայական սպորտի և ֆիզիկական դաստիարակության քաղաքականության վարչության հետ:***

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն	«ԼՈՌԵ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ
ք. Երևան, Աբովյան 9	գործունեության հասցե՝
Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառնական վարչություն	ՀՀ, ք. Երևան Չարենցի 4
Հ/Հ 900011004489	«ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ 02586282	Հ/Հ16033015694600
Գլխավոր քարտուղար՝	ՀՎՀՀ 06952546
Վ. Էլոյան	Տնօրեն՝
(ստորագրություն)	Գ. Աղաջանյան
Կ.Տ.	(ստորագրություն)
	Կ.Տ.

Հավելված N 2
«22» 03 2019 թ. կնքված
«ՍՊ-ԳՀԾՁԲ-19/8»-132 *ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Հազ.ՀՀ դրամ

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	92621110/3	Սպորտային միջոցառումների կազմակերպման ծառայություններ	0	0	0	9990.0	9990.0	9990.0	9990.0	9990.0	9990.0	9990.0	9990.0	9990.0	9990.0

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն
ք. Երևան, Աբովյան 9
Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ 900011004489
ՀՎՀՀ 02586282
Գլխավոր քարտուղար՝
_____Վ. Էլոյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«ԼՈՌԵ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ
գործունեության հասցե՝
ՀՀ, ք. Երևան Չարենցի 4
«ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ
Հ/Հ16033015694600
ՀՎՀՀ 06952546
Տնօրեն՝
_____Գ. Աղաջանյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 3
«22» 03 2019 թ. կնքված
«ՍՊ-ԳՀԾՁԲ-19/8» 132 *ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«22» 03 2019 թ. կնքված
«ՍՊ-ԳՀԾՁԲ-19/8» *132 ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն